Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից արձանագրություն թիվ 01/2026 գործադիր տնօրեն՝ Անահիտ Շաքարյան/

Утверждено внеочередным общим собранием акционеров ЗАО «Инвиа Инвестментс» протокол номер 01-2026, от 13.02.2026
Руководитель исполнительного органа: Анаит Шакарян

| *ПРИЛОЖЕНИЕ № 1 К ПРАВИЛАМ. СОГЛАШЕНИЕ О ПРЕДОСТАВЛЕНИИ УСЛУГИ «АВТОКОНСУЛЬТИРОВАНИЕ».* | *ԿԱՆՈՆՆԵՐԻ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾ «ԱՎՏՈԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ* |
|---|---|
| **Термины и определения.**<br>**Правила** — правила предоставления консультационных услуг, утвержденные Общим собранием акционеров ЗАО «ИНВИА ИНВЕСТМЕНТС» (далее так же – Инвестиционный советник или Брокер), публикуемые на официальном сайте ЗАО «ИНВИА ИНВЕСТМЕНТС», регулирующие порядок оказания консультационных услуг, права и обязанности сторон, порядок взаимодействия, а также иные условия, и являющиеся неотъемлемой частью настоящего Соглашения. | **Հասկացություններ և սահմանումներ.**<br>**Կանոններ** — խորհրդատվական ծառայությունների մատուցման կանոններ, որոնք հաստատված են «ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (այսուհետ՝ նաև Ներդրումային խորհրդատու կամ Բրոքեր), հրապարակված են «ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՓԲԸ պաշտոնական կայքում և կարգավորում են խորհրդատվական ծառայությունների մատուցման կարգը, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, փոխգործակցության կարգը, ինչպես նաև այլ պայմաններ, և հանդիսանում են սույն Համաձայնության անբաժանելի մասը: |
| **Инвестиционная рекомендация** — информация, автоматизированным способом преобразуемая в поручение брокеру на совершение сделки с финансовым инструментом, посредством программы автоследования, и (или)<br>— информация, содержащая в отношении определенного финансового инструмента предложение, совет о совершении или несовершении сделок по приобретению, отчуждению, заключении договоров, являющихся финансовыми инструментами, комментарий, выражающий положительную оценку таких действий, и соответствующая одному из следующих признаков:<br>а) содержит указание на соответствие (а в случае предложения, совета о несовершении сделок – на несоответствие) такого финансового инструмента или таких действий финансовому положению | **Ներդրումային առաջարկություն.**<br>— տեղեկատվություն, որը ավտոհետևման ծրագրի միջոցով ինքնաշխատ եղանակով վերափոխվում է բրոքերին ուղղված ֆինանսական գործիքով գործարք կնքելու հանձնարարականի, և (կամ)<br>— տեղեկատվություն, որը որոշակի ֆինանսական գործիքի վերաբերյալ պարունակում է առաջարկ, խորհուրդ՝ ձեռքբերման, օտարման կամ ֆինանսական գործիք հանդիսացող պայմանագրերի կնքման կամ չկնքման վերաբերյալ, ինչպես նաև մեկնաբանություն, որը արտահայտում է նման գործողությունների դրական գնահատական, և որը համապատասխանում է ստորև նշված հատկանիշներից առնվազն մեկին՝<br>ա) պարունակում է նշում այն մասին, որ տվյալ ֆինանսական գործիքը կամ տվյալ գործողությունները համապատասխանում են (իսկ գործարքներ չկատարելու առաջարկի կամ խորհրդի դեպքում՝ չեն համապատասխանում) ֆիզիկական կամ |

| | |
|---|---|
| физического или юридического лица и (или) его цели (целям) инвестирования и (или) допустимому риску и (или) ожидаемой доходности ;<br>б) может быть разумно воспринята физическим и юридическим лицом как предоставляемая с учетом его финансового положения и (или) цели (целей) инвестирования и (или) допустимого риска и (или) ожидаемой доходности.<br><br>Инвестиционная рекомендация носит рекомендательный характер и не является распоряжением активами Клиента без его предварительного согласия, выраженного в порядке, установленном настоящим Соглашением и Правилами. | իրավաբանական անձի ֆինանսական վիճակին և (կամ) նրա ներդրումային նպատակին (նպատակներին) և (կամ) թույլատրելի ռիսկի մակարդակին և (կամ) ակնկալվող եկամտաբերությանը,<br>բ) կարող է ողջամտորեն ընկալվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից որպես տեղեկատվություն, որը տրամադրվում է՝ հաշվի առնելով նրա ֆինանսական վիճակը և (կամ) ներդրումային նպատակները և (կամ) թույլատրելի ռիսկի մակարդակը և (կամ) ակնկալվող եկամտաբերությունը:<br><br>**Ներդրումային առաջարկությունը** կրում է խորհրդատվական բնույթ և չի հանդիսանում Հաճախորդի ակտիվների տնօրինման վերաբերյալ հանձնարարություն՝ առանց նրա նախնական համաձայնության, որը արտահայտված է սույն Համաձայնության և Կանոններով սահմանված կարգով: |
| **Стратегия** — совокупность алгоритмов, параметров и инвестиционных подходов, используемых программой автоконсультирования для формирования инвестиционных рекомендаций, которая до момента сопоставления с инвестиционным профилем конкретного Клиента не является инвестиционной рекомендацией. | **Ռազմավարություն** — ալգորիթմների, պարամետրերի և ներդրումային մոտեցումների համակցություն, որոնք կիրառվում են ավտոմատացված ներդրումային խորհրդատվության ծրագրի կողմից ներդրումային առաջարկությունների ձևավորման համար և որոնք մինչև կոնկրետ Հաճախորդի ներդրումային պրոֆիլի հետ համապատասխանեցման պահը չեն հանդիսանում ներդրումային առաջարկություն: |
| **Инвестиционный профиль** — информация о доходности от операций с финансовыми инструментами, на которую рассчитывает Клиент, о периоде времени, за который определяется такая доходность, а также о допустимом для Клиента риске убытков от таких операций. | **Ներդրումային պրոֆիլ** — տեղեկատվություն ֆինանսական գործիքներով կատարվող գործարքների այն եկամտաբերության վերաբերյալ, որն ակնկալում է Հաճախորդը, այն ժամանակահատվածի վերաբերյալ, որի ընթացքում սահմանվում է նման եկամտաբերությունը, ինչպես նաև նման գործարքներից Հաճախորդի համար թույլատրելի վնասների ռիսկի մակարդակի վերաբերյալ: |
| **Инвестиционная рекомендация** — инвестиционная рекомендация, сформированная программой автоконсультирования с учетом инвестиционного профиля конкретного Клиента. | **Ներդրումային առաջարկություն** — ներդրումային առաջարկություն, որը ձևավորվել է ավտոմատացված ներդրումային խորհրդատվության ծրագրի միջոցով՝ հաշվի առնելով կոնկրետ Հաճախորդի ներդրումային պրոֆիլը: |
| **Инвестиционный портфель** — информация о принадлежащих клиенту ценных бумагах и денежных средствах (в том числе в иностранной валюте), обязательствах из сделок с ценными бумагами и денежными средствами (в том числе с иностранной валютой), обязательствах из договоров, являющихся производными финансовыми инструментами, и задолженности этого Клиента перед Брокером. | **Ներդրումային պորտֆել** — տեղեկատվություն Հաճախորդին պատկանող արժեթղթերի և դրամական միջոցների (այդ թվում՝ արտարժույթով), արժեթղթերով և դրամական միջոցներով (այդ թվում՝ արտարժույթով) գործարքներից առաջացող պարտավորությունների, ածանցյալ ֆինանսական գործիք հանդիսացող պայմանագրերից առաջացող պարտավորությունների, ինչպես նաև տվյալ Հաճախորդի Բրոքերի նկատմամբ ունեցած պարտքերի վերաբերյալ: |

| | |
|---|---|
| **Правила выявления и контроля конфликта интересов** — внутренний документ, предусматривающий меры по выявлению и контролю конфликта интересов при осуществлении деятельности по инвестиционному консультированию, а также по предотвращению его последствий. | **Շահերի բախման բացահայտման և վերահսկման կանոններ** — ներքին փաստաթուղթ, որը նախատեսում է ներդրումային խորհրդատվության գործունեություն իրականացնելիս շահերի բախման բացահայտման և վերահսկման, ինչպես նաև դրա հետևանքների կանխարգելման միջոցներ: |
| **Мониторинг инвестиционного портфеля** — осуществление на протяжении срока действия договора об инвестиционном консультировании оценки соответствия инвестиционного портфеля инвестиционному профилю. | **Ներդրումային պորտֆելի մոնիթորինգ** — ներդրումային խորհրդատվության պայմանագրի գործողության ընթացքում ներդրումային պրոֆիլին ներդրումային պորտֆելի համապատասխանության գնահատման իրականացում: |
| **Предоставление инвестиционной рекомендации** — составление инвестиционной рекомендации инвестиционным советником, в том числе с использованием программ для электронных вычислительных машин. Не является предоставлением инвестиционной рекомендации осуществление функций, которые ограничиваются сбором и передачей информации, в том числе запрашиваемой в целях определения инвестиционного профиля либо сбором и введением информации в программу автоконсультирования, с последующей передачей инвестиционной рекомендации, составленной такой программой. | **Ներդրումային առաջարկության տրամադրում** — ներդրումային առաջարկության կազմումը ներդրումային խորհրդատուի կողմից, այդ թվում՝ էլեկտրոնային հաշվարկային մեքենաների համար նախատեսված ծրագրերի կիրառմամբ: Ներդրումային առաջարկության տրամադրում չի համարվում այն գործառույթների իրականացումը, որոնք սահմանափակվում են տեղեկատվության հավաքագրմամբ և փոխանցմամբ, այդ թվում՝ ներդրումային պրոֆիլի սահմանման նպատակով պահանջվող տեղեկատվության հավաքագրմամբ կամ տեղեկատվության հավաքագրմամբ և մուտքագրմամբ ավտոխորհրդատվության ծրագրում՝ հետագայում այդ ծրագրի կողմից կազմված ներդրումային առաջարկության փոխանցմամբ: |
| **Ожидаемая доходность** — доходность от операций с финансовыми инструментами, определенная инвестиционным советником в документе об инвестиционном профиле клиента. | **Ակնկալվող եկամտաբերություն** — ֆինանսական գործիքներով իրականացվող գործարքներից ստացվող եկամտաբերություն, որը սահմանվում է ներդրումային խորհրդատուի կողմից Հաճախորդի ներդրումային պրոֆիլի վերաբերյալ փաստաթղթում: |
| **Допустимый риск** — предельный уровень допустимого риска убытков клиента, являющегося инвестором, определенный инвестиционным советником в документе об инвестиционном профиле клиент. | **Թույլատրելի ռիսկ** — ներդրող հանդիսացող Հաճախորդի համար վնասների թույլատրելի ռիսկի առավելագույն մակարդակ, որը սահմանվում է ներդրումային խորհրդատուի կողմից Հաճախորդի ներդրումային պրոֆիլի վերաբերյալ փաստաթղթում: |
| **Инвестиционный горизонт** — период времени, за который определяются ожидаемая доходность и допустимый риск. | **Ներդրումային հորիզոն** — ժամանակահատված, որի համար սահմանվում են ակնկալվող եկամտաբերությունը և թույլատրելի ռիսկը: |
| **Мобильное приложение «Rate.Up»** – программа для ЭВМ «**Rate.Up**», предназначенная для работы на мобильных устройствах, включающая программу автоконсультирования и автоследования для ЭВМ «**Rate.Up**». | **«Rate.Up» բջջային հավելված** — «**Rate.Up**» էլեկտրոնային հաշվարկային մեքենաների համար նախատեսված ծրագիր, որը նախատեսված է բջջային սարքերում գործարկվելու համար և ներառում է էլեկտրոնային հաշվարկային մեքենաների համար նախատեսված ավտոխորհրդատվության և ավտոհետևման «**Rate.Up**» ծրագիրը: |
| Термины, специально не определенные по тексту настоящего Соглашения, применяются в значении, | **Սույն Համաձայնության տեքստում հատուկ չսահմանված հասկացությունները** կիրառվում են այլ |

| | |
|---|---|
| определенном иными нормативными правовыми актами. | նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակությամբ: |
| **1. Предмет Соглашения.** | **1. Համաձայնության առարկան** |
| 1.1. По настоящему соглашению о предоставлении услуги «Автоконсультирование» (далее - Соглашение) ЗАО «ИНВИА ИНВЕСТМЕНТС» обязуется оказывать услуги по предоставлению инвестиционных рекомендаций (далее – услуги по инвестиционному консультированию) в форме электронного документа на основе Стратегий посредством программы автоконсультирования «**Rate.Up»,** которая на основе заданных условий автоматизированным способом без непосредственного участия человека, либо с ограничением его участия, сбором и вводом информации в данную программу, без принятия Инвестиционным советником индивидуальных решений по каждой конкретной сделке Клиента формирует и предоставляет инвестиционные рекомендации.<br><br>Участие Инвестиционного советника ограничивается разработкой, сопровождением и контролем функционирования программного обеспечения и стратегий. | 1.1. Համաձայն սույն «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցման համաձայնության (այսուհետ՝ Համաձայնություն)՝ «ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ **Ներդրումային խորհրդատու** կամ **Բրոքեր**) պարտավորվում է տրամադրել ներդրումային առաջարկությունների մատուցման ծառայություններ (այսուհետ՝ **ներդրումային խորհրդատվության ծառայություններ**)՝ էլեկտրոնային փաստաթղթի ձևով, ռազմավարությունների հիման վրա, «**Rate.Up**» ավտոխորհրդատվության ծրագրի միջոցով, որը սահմանված պայմանների հիման վրա ավտոմատացված եղանակով՝ առանց մարդու անմիջական մասնակցության կամ նրա մասնակցությունը սահմանափակելով տվյալ ծրագրում տեղեկատվության հավաքագրմամբ և մուտքագրմամբ, առանց Ներդրումային խորհրդատուի կողմից Հաճախորդի յուրաքանչյուր կոնկրետ գործարքի վերաբերյալ անհատական որոշումներ ընդունելու, ձևավորում և տրամադրում է ներդրումային առաջարկություններ:<br>Ներդրումային խորհրդատուի մասնակցությունը սահմանափակվում է ծրագրային ապահովման և ռազմավարությունների մշակմամբ, սպասարկմամբ և դրանց գործունեության վերահսկմամբ: |
| 1.2. Для целей настоящего Соглашения о предоставлении услуги «Автоконсультирование» (далее – Соглашение) под стратегиями понимается информация об инвестиционных рекомендациях по инструментам фондового, срочного, валютного рынков, передаваемая Клиенту через мобильное приложение **«Rate.Up».** Торговые сигналы «Автоконсультирование» по соответствующему инструменту фондового, срочного или валютного рынка предоставляются согласно следующим категориям стратегий:<br>• **Защитная,**<br>• **Консервативная,**<br>• **Сбалансированная,**<br>• **Активная,**<br>• **Агрессивная** | **1.2.** Սույն «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցման համաձայնության (այսուհետ՝ **Համաձայնություն**) նպատակներով **ռազմավարություններ** են համարվում ֆոնդային, ժամկետային և արտարժութային շուկաների գործիքների վերաբերյալ ներդրումային առաջարկությունների մասին տեղեկատվությունը, որը փոխանցվում է Հաճախորդին «**Rate.Up**» բջջային հավելվածի միջոցով: Ֆոնդային, ժամկետային կամ արտարժութային շուկայի համապատասխան գործիքի վերաբերյալ «Ավտոխորհրդատվություն» առևտրային ազդանշանները տրամադրվում են հետևյալ ռազմավարությունների կատեգորիաների համաձայն՝<br>• **Պաշտպանողական**<br>• **Պահպանողական**<br>• **Հավասարակշռված**<br>• **Ակտիվ**<br>• **Ագրեսիվ** |
| 1.3. Информация о стратегиях, входящих в указанные в п. 1.2. настоящего Соглашения | **1.3.** Սույն Համաձայնության 1.2 կետում նշված ռազմավարությունների կատեգորիաներին պատկանող |

| | |
|---|---|
| категории стратегий, в том числе информация о типе инвестиционного профиля по каждой стратегии, и доступных для подключения размещается в карточке стратегии в мобильном приложении «**Rate.Up**». | ռազմավարությունների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ յուրաքանչյուր ռազմավարության համար նախատեսված ներդրումային պրոֆիլի տեսակի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև միացման համար հասանելի ռազմավարությունները, տեղադրվում են «**Rate.Up**» բջջային հավելվածում համապատասխան ռազմավարության քարտում: |
| 1.4. Выбор стратегии осуществляется Клиентом путем указания выбранной стратегии в Приложение 1 к Соглашению при подключении услуги. | **1.4.** Ռազմավարության ընտրությունն իրականացվում է Հաճախորդի կողմից՝ ծառայության միացման ժամանակ Կանոնների թիվ 1 Հավելվածում ընտրված ռազմավարությունը նշելու միջոցով: |
| 1.5. Отключение стратегии осуществляется путем предоставления подписанного Приложения 2 к Соглашению на отключение услуги. | **1.5.** Ռազմավարության անջատումն իրականացվում է Կանոնների թիվ 2 Հավելվածը ստորագրված ձևով ներկայացնելու միջոցով՝ ծառայության անջատման նպատակով: |
| 1.6. Инвестиционный советник вправе отказать Клиенту в подключении определенной стратегии в целях соблюдения требований законодательства Республики Армения, нормативных актов Центрального банка РА, управления рисками, а также при несоответствии инвестиционного профиля Клиента параметрам выбранной стратегии. | **1.6.** Ներդրումային խորհրդատուն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդին որոշակի ռազմավարության միացնելուց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման, ռիսկերի կառավարման նպատակներով, ինչպես նաև այն դեպքում, երբ Հաճախորդի ներդրումային պրոֆիլը չի համապատասխանում ընտրված ռազմավարության պարամետրերին: |
| 1.7. **Инвестиционный советник вправе отключить Клиента от определенной стратегии** в случаях, предусмотренных настоящим Соглашением, Правилами, а также в целях управления рисками, обеспечения стабильной работы программного обеспечения или соблюдения требований законодательства Республики Армения. | **1.7. Ներդրումային խորհրդատուն իրավունք ունի անջատել Հաճախորդին որոշակի ռազմավարությունից** սույն Համաձայնությամբ և Կանոններով նախատեսված դեպքերում, ինչպես նաև ռիսկերի կառավարման նպատակներով, ծրագրային ապահովման կայուն աշխատանքի ապահովման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նպատակով: |
| 1.8. В рамках одного портфеля Клиент может подключить только одну стратегию. | **1.8.** Մեկ ներդրումային պորտֆելի շրջանակում Հաճախորդը կարող է միացնել միայն մեկ ռազմավարություն: |
| 1.9. Инвестиционный советник вправе отключать стратегии автоматически, без предоставления Клиентом подписанного заявления на отключение определенной стратегии в следующих случаях: если осуществлена смена инвестиционного профиля на тот, что не соответствует стратегии; если у Клиента актив на счете снизится ниже порога, предусмотренного определенной стратегией; если через 10 дней после подключения стратегии отсутствуют денежные средства в портфеле Клиента, являющемся источником списания вознаграждения согласно соответствующей стратегии. | **1.9.** Ներդրումային խորհրդատուն իրավունք ունի ռազմավարությունները անջատել ավտոմատ կերպով՝ առանց Հաճախորդի կողմից որոշակի ռազմավարության անջատման վերաբերյալ ստորագրված դիմում ներկայացնելու, հետևյալ դեպքերում՝<br>ա) եթե ներդրումային պրոֆիլը փոփոխվել է այնպես, որը չի համապատասխանում տվյալ ռազմավարությանը,<br>բ) եթե Հաճախորդի հաշվին առկա ակտիվների չափը նվազում է տվյալ ռազմավարությամբ սահմանված շեմից,<br>գ) եթե ռազմավարության միացումից հետո 10 (տասը) |

| | |
|---|---|
| | օրացուցային օրվա ընթացքում Հաճախորդի պորտֆելում բացակայում են դրամական միջոցներ, որոնք տվյալ ռազմավարության համաձայն հանդիսանում են վարձատրության գանձման աղբյուր: |
| 1.10. Инвестиционные рекомендации предоставляются Клиенту по инициативе Инвестиционного советника. | **1.10.** Ներդրումային առաջարկությունները տրամադրվում են Հաճախորդին Ներդրումային խորհրդատուի նախաձեռնությամբ: |
| 1.11. Инвестиционный советник предоставляет Клиенту право на использование программы для ЭВМ «**Rate.Up**», программы автоконсультирования и автоследования для ЭВМ «**Rate.Up**».<br>По настоящему Соглашению Клиент не приобретает исключительного права на использование программы для ЭВМ «**Rate.Up**», программы автоконсультирования и автоследования для ЭВМ «**Rate.Up**». Клиент вправе использовать программу для ЭВМ «**Rate.Up**», программу автоконсультирования и автоследования для ЭВМ «**Rate.Up**» по их функциональному назначению. | **1.11.** Ներդրումային խորհրդատուն Հաճախորդին տրամադրում է էլեկտրոնային հաշվարկային մեքենաների համար նախատեսված «**Rate.Up**» ծրագիրը, ինչպես նաև էլեկտրոնային հաշվարկային մեքենաների համար նախատեսված ավտոխորհրդատվության և ավտոհետևման «**Rate.Up**» ծրագրերի օգտագործման իրավունք:<br>Սույն Համաձայնության համաձայն՝ Հաճախորդը չի ձեռք բերում բացառիկ իրավունք «**Rate.Up**» և «**Rate.Up**» ծրագրերի օգտագործման նկատմամբ: Հաճախորդն իրավունք ունի օգտագործել «**Rate.Up**» և «**Rate.Up**» ծրագրերը բացառապես դրանց գործառութային նշանակությանը համապատասխան: |
| 1.12. Настоящее Соглашение является договором об инвестиционном консультировании и считается заключенным с момента подписания Клиентом и принятия Инвестиционным советником Приложения 1 к Соглашению с проставленными Клиентом отметками в соответствующем поле подписываемого Приложения. | **1.12.** Սույն Համաձայնությունը հանդիսանում է ներդրումային խորհրդատվության համաձայնություն և համարվում է կնքված այն պահից, երբ Հաճախորդի կողմից ստորագրվում է, իսկ Ներդրումային խորհրդատուի կողմից ընդունվում է Կանոնների թիվ 1 Հավելվածը՝ համապատասխան դաշտում Հաճախորդի կողմից նշում կատարելու պայմանով: |
| **2. Обязанности Сторон.** | **2. Կողմերի պարտականությունները** |
| 2.1. Инвестиционный советник обязуется:<br><br>2.1.1. Оказывать услуги «Автоконсультирование» добросовестно, разумно и действовать в интересах Клиента.<br>2.1.2. Соблюдать приоритет интересов Клиента над собственными интересами.<br>2.1.3. Не злоупотреблять своими правами и (или) ущемлять интересы Клиента.<br>2.1.4. Запросить у Клиента информацию, необходимую для определения инвестиционного профиля.<br>2.1.5. Предоставлять инвестиционные рекомендации Клиенту в соответствии с его инвестиционным профилем.<br>2.1.6. Принимать меры по выявлению и контролю конфликта интересов, а также по предотвращению его последствий.<br>2.1.7. В случае если Клиент уведомил Инвестиционного советника об изменении | **2.1. Ներդրումային խորհրդատուն պարտավորվում է՝**<br>**2.1.1.** Մատուցել «Ավտոխորհրդատվություն» ծառայությունները բարեխղճորեն և ողջամտորեն, ինչպես նաև գործել Հաճախորդի շահերից ելնելով:<br>**2.1.2.** Պահպանել Հաճախորդի շահերի գերակայությունը սեփական շահերի նկատմամբ:<br>**2.1.3.** Չչարաշահել իր իրավունքները և (կամ) չսահմանափակել Հաճախորդի շահերը:<br>**2.1.4.** Պահանջել Հաճախորդից ներդրումային պրոֆիլի սահմանման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:<br>**2.1.5.** Տրամադրել Հաճախորդին ներդրումային առաջարկություններ՝ նրա ներդրումային պրոֆիլին համապատասխան:<br>**2.1.6.** Ձեռնարկել միջոցներ շահերի բախման բացահայտման և վերահսկման, ինչպես նաև դրա հետևանքների կանխարգելման ուղղությամբ:<br>**2.1.7.** Այն դեպքում, երբ Հաճախորդը Ներդրումային խորհրդատուին տեղեկացրել է իր վերաբերյալ |

| | |
|---|---|
| информации о Клиенте повторно определить инвестиционный профиль.<br>2.1.8. Раскрыть на сайте Инвестиционного советника внутренние документы/изменения во внутренние документы, предусмотренные настоящим Договором.<br>2.1.9. Клиент уведомлен о возможном конфликте интересов, связанном с совмещением Инвестиционным советником функций инвестиционного консультирования, брокерского обслуживания и предоставления программного обеспечения, а также о том, что вознаграждение Инвестиционного советника может зависеть от объема и частоты операций Клиента. | տեղեկատվության փոփոխության մասին, կրկնակի սահմանել ներդրումային պրոֆիլը:<br>**2.1.8.** Բացահայտել Ներդրումային խորհրդատուի պաշտոնական կայքում սույն Համաձայնությամբ նախատեսված ներքին փաստաթղթերը և (կամ) դրանցում կատարված փոփոխությունները:<br>**2.1.9. Հաճախորդը տեղեկացված է շահերի հնարավոր բախման առկայության մասին**, որը պայմանավորված է Ներդրումային խորհրդատուի կողմից ներդրումային խորհրդատվության, բրոքերային սպասարկման և ծրագրային ապահովման տրամադրման գործառույթների համատեղմամբ, ինչպես նաև այն մասին, որ Ներդրումային խորհրդատուի վարձատրությունը կարող է կախված լինել Հաճախորդի կողմից իրականացվող գործարքների ծավալից և հաճախականությունից: |
| **2.2. Клиент обязуется:**<br>2.2.1. Предоставить Инвестиционному советнику информацию для определения инвестиционного профиля.<br>2.2.2. Уведомить Инвестиционного советника об изменении информации, влияющей на определение инвестиционного профиля.<br>2.2.3. Заходить в мобильное приложение «**Rate.Up**» не реже одного раза в 3 года.<br>2.2.4. Не подавать самостоятельно заявки на совершение сделок. Клиент осознает и соглашается с тем, что самостоятельная подача заявок на совершение сделок может привести к несоответствию инвестиционного портфеля выбранной стратегии и инвестиционному профилю, и в таком случае Инвестиционный советник вправе приостановить либо прекратить оказание услуги «Автоконсультирование». | **2.2. Հաճախորդը պարտավորվում է՝**<br>**2.2.1.** Ներդրումային խորհրդատուին տրամադրել ներդրումային պրոֆիլի սահմանման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:<br>**2.2.2.** Տեղեկացնել Ներդրումային խորհրդատուին այն տեղեկատվության փոփոխության մասին, որը կարող է ազդել ներդրումային պրոֆիլի սահմանման վրա:<br>**2.2.3.** Մուտք գործել «**Rate.Up**» բջջային հավելված առնվազն երեք (3) տարին մեկ անգամ:<br>**2.2.4.** Ինքնուրույն չներկայացնել գործարքներ կատարելու հայտեր: **Հաճախորդը գիտակցում և համաձայնում է**, որ գործարքների կատարման համար հայտերի ինքնուրույն ներկայացումը կարող է հանգեցնել ներդրումային պորտֆելի՝ ընտրված ռազմավարությանը և ներդրումային պրոֆիլին չհամապատասխանելուն, և այդ դեպքում Ներդրումային խորհրդատուն իրավունք ունի կասեցնել կամ դադարեցնել «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցումը: |
| **3. Порядок оказания услуги «Автоконсультирование».** | **3. «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցման կարգը** |
| 3.1. Для получения услуги «Автоконсультирование» Клиент должен иметь:<br>3.1.1. доступ в Интернет со скоростью не ниже 10 Мбит/с. Услуги связи предоставляются Клиенту оператором связи в соответствии с заключенным между Клиентом и соответствующим оператором связи договором. | **3.1.** «Ավտոխորհրդատվություն» ծառայությունից օգտվելու համար Հաճախորդը պետք է ունենա՝<br>**3.1.1.** ինտերնետ կապ՝ ոչ պակաս, քան 10 Մբիթ/վրկ արագությամբ: Կապի ծառայությունները Հաճախորդին մատուցվում են կապի օպերատորի կողմից՝ Հաճախորդի և համապատասխան կապի օպերատորի միջև կնքված պայմանագրի համաձայն: |
| 3.2. Инвестиционный советник предоставляет услуги «Автоконсультирование» при соблюдении всех нижеуказанных обстоятельств:<br>А) подписания Клиентом Приложения № 1 к Соглашению с указанием выбранной стратегии; | **3.2.** Ներդրումային խորհրդատուն մատուցում է «Ավտոխորհրդատվություն» ծառայությունները՝ ստորև նշված բոլոր պայմանների միաժամանակյա պահպանման դեպքում՝<br>ա) Հաճախորդի կողմից Համաձայնության թիվ 1 |

| | |
|---|---|
| Б) получения в порядке, установленном настоящими Правилами, доступа в Личный Кабинет в рамках услуги «Автоконсультирование» посредством мобильного приложения «**Rate.Up**».<br>В) получения в порядке, установленном настоящим Соглашением, права использования Системы/иного программного обеспечения, предусмотренного Соглашением/Правилами/Приложениями к нему, для подачи заявок Клиента. | Հավելվածի ստորագրում՝ ընտրված ռազմավարության նշումով,<br>բ) սույն Կանոններով սահմանված կարգով «Ավտոխորհրդատվություն» ծառայության շրջանակում Անձնական կաբինետ մուտքի իրավունքի ստացում՝ «**Rate.Up**» բջջային հավելվածի միջոցով,<br>գ) սույն Համաձայնությամբ և (կամ) դրա հավելվածներով նախատեսված Համակարգի և (կամ) այլ ծրագրային ապահովման օգտագործման իրավունքի ստացում՝ Հաճախորդի հայտերը ներկայացնելու նպատակով: |
| 3.3. В целях определения инвестиционного профиля клиента Инвестиционный советник запрашивает у него способом и в форме, необходимую информацию. | **3.3.** Հաճախորդի ներդրումային պրոֆիլը սահմանելու նպատակով Ներդրումային խորհրդատուն վերջինից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ Բրոքերական գործունեության Կանոնների 5-րդ կետով նախատեսված եղանակով և ձևով: |
| 3.4. Инвестиционный советник не предоставляет инвестиционные рекомендации в случае отказа Клиента предоставить информацию для определения инвестиционного профиля. | **3.4.** Ներդրումային խորհրդատուն ներդրումային առաջարկություններ չի տրամադրում այն դեպքում, երբ Հաճախորդը հրաժարվում է ներդրումային պրոֆիլի սահմանման համար անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելուց: |
| 3.5. Ожидаемая доходность, указываемая при определении инвестиционного профиля, не гарантируется. | **3.5.** Ներդրումային պրոֆիլի սահմանման ժամանակ նշված ակնկալվող եկամտաբերությունը չի երաշխավորվում: |
| 3.6. Инвестиционная рекомендация включает в себя:<br>— описание ценной бумаги, в том числе (при наличии) номер государственной регистрации выпуска ценной бумаги, и (или) ISIN код, и (или) код ценной бумаги, предусмотренный организатором торговли, либо иные сведения, позволяющие однозначно идентифицировать ценную бумагу, описание планируемой с ней сделки, в том числе вид сделки, либо иные сведения, позволяющие однозначно идентифицировать планируемую сделку, а также сторону клиента в такой сделке и (или);<br>— описание договора, являющегося производным финансовым инструментом, в том числе код, предусмотренный организатором торговли, иной согласованный с клиентом код, либо иные сведения, позволяющие однозначно идентифицировать соответствующий производный финансовый инструмент, а также сторону клиента в договоре, являющемся таким производным финансовым инструментом;<br>— определенную или определяемую цену сделки с ценными бумагами и (или) цену договоров, являющихся производными финансовыми инструментами, и (или) определенное или | **3.6.** Ներդրումային առաջարկությունը ներառում է՝<br>— արժեթղթի նկարագրություն, այդ թվում (առկայության դեպքում) արժեթղթի թողարկման պետական գրանցման համարը, և (կամ) ISIN կոդը, և (կամ) առևտրի կազմակերպչի կողմից սահմանված արժեթղթի կոդը, կամ այլ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս միանշանակ նույնականացնել արժեթուղթը, ինչպես նաև դրա հետ նախատեսվող գործարքի նկարագրությունը, այդ թվում՝ գործարքի տեսակը, կամ այլ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս միանշանակ նույնականացնել նախատեսվող գործարքը, ինչպես նաև Հաճախորդի կողմը տվյալ գործարքում, և (կամ)<br>— ածանցյալ ֆինանսական գործիք հանդիսացող պայմանագրի նկարագրություն, այդ թվում՝ առևտրի կազմակերպչի կողմից սահմանված կոդը, Հաճախորդի հետ համաձայնեցված այլ կոդը կամ այլ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս միանշանակ նույնականացնել համապատասխան ածանցյալ ֆինանսական գործիքը, ինչպես նաև Հաճախորդի կողմը տվյալ պայմանագրում,<br>— արժեթղթերով գործարքների և (կամ) ածանցյալ ֆինանսական գործիք հանդիսացող պայմանագրերի որոշակի կամ որոշելի գինը և (կամ) ֆինանսական գործիքի որոշակի կամ որոշելի քանակը: |

| | |
|---|---|
| определяемое количество финансового инструмента. | |
| 3.7. В связи с исполнением инвестиционных рекомендаций возможно возникновение расходов на выплату вознаграждений Брокеру, депозитарию, регистратору, организатору торговли, клиринговой организации, в размере, установленном тарифами указанных организаций. | **3.7.** Ներդրումային առաջարկությունների կատարման հետ կապված հնարավոր է ծախսերի առաջացում՝ Բրոքերին, դեպոզիտարիին, ռեգիստրավարին, առևտրի կազմակերպչին, քլիրինգային կազմակերպությանը վճարվող վարձատրությունների մասով՝ նշված կազմակերպությունների սակագներով սահմանված չափով: |
| 3.8. В случае если Инвестиционный советник выявляет несоответствие активов Клиента инструментам подключенной Клиенту стратегии, Инвестиционный советник вправе предоставить Клиенту инвестиционную рекомендацию, направленную на устранение указанного несоответствия, посредством программы автоконсультирования «**Rate.Up**». | **3.8.** Այն դեպքում, երբ Ներդրումային խորհրդատուն բացահայտում է Հաճախորդի ակտիվների և Հաճախորդի կողմից միացված ռազմավարության գործիքների միջև անհամապատասխանություն, Ներդրումային խորհրդատուն իրավունք ունի «**Rate.Up**» ավտոխորհրդատվության ծրագրի միջոցով Հաճախորդին տրամադրել ներդրումային առաջարկություն՝ ուղղված նշված անհամապատասխանության վերացմանը: |
| 3.9. Срок действия индивидуальной инвестиционной рекомендации определяется самой индивидуальной инвестиционной рекомендацией. | **3.9.** Անհատական ներդրումային առաջարկության գործողության ժամկետը սահմանվում է տվյալ անհատական ներդրումային առաջարկությամբ: |
| 3.10. Отчеты в рамках оказания услуги «Автоконсультирование» предоставляются Клиенту в электронном виде путем размещения соответствующего отчета в мобильном приложении «**Rate.Up**» или Личном Кабинете Клиента. При этом отчет считается предоставленным Клиенту с момента его размещения. | **3.10.** «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցման շրջանակում հաշվետվությունները Հաճախորդին տրամադրվում են էլեկտրոնային ձևով՝ համապատասխան հաշվետվությունը «**Rate.Up**» բջջային հավելվածում կամ Հաճախորդի Անձնական կաբինետում տեղադրելու միջոցով: Ընդ որում՝ հաշվետվությունը համարվում է տրամադրված Հաճախորդին դրա տեղադրման պահից: |
| 3.11. Инвестиционный советник не гарантирует получение дохода, отсутствие убытков, достижение ожидаемой доходности либо соответствие инвестиционных рекомендаций ожиданиям Клиента. Клиент принимает на себя риски, связанные с совершением операций на рынке ценных бумаг. | **3.11.** Ներդրումային խորհրդատուն չի երաշխավորում եկամտի ստացումը, վնասների բացակայությունը, ակնկալվող եկամտաբերության հասնելը կամ ներդրումային առաջարկությունների համապատասխանությունը Հաճախորդի ակնկալիքներին: Հաճախորդը իր վրա է վերցնում արժեթղթերի շուկայում գործարքներ իրականացնելու հետ կապված ռիսկերը: |
| **4. Вознаграждение.** | **4. Վարձատրություն** |
| 4.1. Вознаграждение за предоставление услуг по инвестиционному консультированию путем предоставления торговых сигналов «Автоконсультирование» для мобильного приложения «**Rate.Up**» устанавливается тарифным планам согласно соответствующей категории стратегии:<br>Тарифный план 1 …Инвестиционный советник 1 | 4.1. Ներդրումային խորհրդատվության ծառայությունների մատուցման համար՝ «**Rate.Up**» բջջային հավելվածի միջոցով «Ավտոխորհրդատվություն» առևտրային ազդանշանների տրամադրման եղանակով, սահմանվում է վարձատրություն՝ համապատասխան ռազմավարության կատեգորիային համապատասխան սակագնային պլանների համաձայն, այդ թվում՝ |

| | |
|---|---|
| Тарифный план 2 ...Инвестиционный советник 2 ... | Սակագնային պլան 1 … Ներդրումային խորհրդատու 1 Սակագնային պլան 2 … Ներդրումային խորհրդատու 2**…** |
| 4.2. Информация о тарифных планах, устанавливающих вознаграждение за предоставление услуги «Автоконсультирование» в рамках каждой стратегии, также размещается в карточке стратегии в мобильном приложении «**Rate.Up**». | **4.2.** Ռազմավարության շրջանակում «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցման համար սահմանված սակագնային պլանների և վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է նաև «**Rate.Up**» բջջային հավելվածում համապատասխան ռազմավարության քարտում: |
| 4.3. Выбор определенной стратегии является автоматическим акцептом подключения тарифного плана, предусмотренного указанной стратегией. | **4.3.** Որոշակի ռազմավարության ընտրությունը համարվում է տվյալ ռազմավարությամբ նախատեսված սակագնային պլանի միացման ավտոմատ ակցեպտ: |
| 4.4. Обязательство по оплате услуги «Автоконсультирование» включается в платежные обязательства Клиента согласно Правил. | **4.4.** «Ավտոխորհրդատվություն» ծառայության դիմաց վճարման պարտավորությունը ներառվում է Հաճախորդի վճարային պարտավորությունների մեջ՝ Կանոններով սահմանված կարգով: |
| 4.5. При отключении услуги исчисление и взимание вознаграждения брокера Клиенту за обслуживание будет осуществляться в соответствии с тарифными планами Брокера. | **4.5.** Ծառայության անջատման դեպքում Բրոքերի կողմից Հաճախորդին սպասարկման համար վարձատրության հաշվարկումն ու գանձումը իրականացվում է «Միասնական» սակագնային պլանի համաձայն (ֆոնդային շուկա), «Ժամկետային» սակագնային պլանի համաձայն (ժամկետային շուկա) և «Արտարժութային» սակագնային պլանի համաձայն (արտարժութային շուկա): |
| 4.6. При отключении стратегии, предусмотренном п. 1.7., п. 1.9. настоящего Соглашения, исчисление и взимание вознаграждения брокера Клиенту за обслуживание будет осуществляться в соответствии с тарифными планами Брокера. | **4.6.** Սույն Համաձայնության 1.7. և 1.9. կետերով նախատեսված ռազմավարության անջատման դեպքում Բրոքերի կողմից Հաճախորդին սպասարկման համար վարձատրության հաշվարկումն ու գանձումը իրականացվում է «Միասնական», «Ժամկետային» և «Արտարժութային» սակագնային պլանների համաձայն՝ համապատասխան շուկաների համար: |
| 4.7. В случае удаления информации о стратегии в мобильном приложении «**Rate.Up**» и отключения Клиента от стратегии по инициативе инвестиционного советника исчисление и взимание вознаграждения брокера Клиенту за обслуживание будет осуществляться в соответствии с тарифными планами Брокера. | **4.7.** «**Rate.Up**» բջջային հավելվածում ռազմավարության վերաբերյալ տեղեկատվության հեռացման և Հաճախորդին ռազմավարությունից անջատելու դեպքում՝ Ներդրումային խորհրդատուի նախաձեռնությամբ, Բրոքերի կողմից Հաճախորդին սպասարկման համար վարձատրության հաշվարկումն ու գանձումը իրականացվում է «Միասնական», «Ժամկետային» և «Արտարժութային» սակագնային պլանների համաձայն: |
| 4.8. Вознаграждение за предоставление права на использование программы автоконсультирования «**Rate.Up**» включено в вознаграждение за предоставление услуги «Автоконсультирование». | **4.8.** «**Rate.Up**» ավտոխորհրդատվության ծրագրի օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց վարձատրությունը ներառված է «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցման համար սահմանված վարձատրության մեջ: |

| | |
|---|---|
| **5. Ответственность Сторон.** | **5. Կողմերի պատասխանատվությունը** |
| 5.1. Инвестиционный советник несет ответственность за неисполнение и (или) ненадлежащее исполнение своих обязанностей при оказании услуги «Автоконсультирование» в соответствии с законодательством РА и настоящим соглашением об инвестиционном консультировании. | **5.1.** Ներդրումային խորհրդատուն պատասխանատվություն է կրում «Ավտոխորհրդատվություն» ծառայության մատուցման ընթացքում իր պարտավորությունների չկատարման և (կամ) ոչ պատշաճ կատարման համար՝ ՀՀ օրենսդրության և սույն ներդրումային խորհրդատվության համաձայնության համաձայն: |
| 5.2. Инвестиционный советник не несет ответственности за убытки, причиненные вследствие инвестиционной рекомендации, основанной на представленной Клиентом недостоверной информации. | **5.2.** Ներդրումային խորհրդատուն պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք առաջացել են ներդրումային առաջարկության հետևանքով, եթե այն հիմնված է Հաճախորդի կողմից ներկայացված ոչ հավաստի տեղեկատվության վրա: |
| 5.3. Инвестиционный советник не несёт ответственности за полное или частичное неисполнение своих обязательств вследствие технических сбоев, сбоев в функционировании программного обеспечения, действий операторов сотовой связи, а также в иных случаях, при условии, что Инвестиционный советник принял все разумные и зависящие от него меры для обеспечения надлежащего функционирования соответствующих систем. | **5.3.** Ներդրումային խորհրդատուն պատասխանատվություն չի կրում իր պարտավորությունների ամբողջական կամ մասնակի չկատարման համար, եթե այն պայմանավորված է տեխնիկական խափանումներով, ծրագրային ապահովման գործառության խափանումներով, բջջային կապի օպերատորների գործողություններով, ինչպես նաև այլ դեպքերում, պայմանով, որ Ներդրումային խորհրդատուն ձեռնարկել է բոլոր ողջամիտ և իրենից կախված միջոցները համապատասխան համակարգերի պատշաճ գործառույթն ապահովելու համար: |
| 5.4. Инвестиционный советник не несет ответственности за убытки, понесенные Клиентом в случае, если Клиент совершил сделки с финансовыми инструментами на основании предоставленной инвестиционной рекомендации, с отступлением от условий, указанных в инвестиционной рекомендации (и/или в соглашении об инвестиционном консультировании), в том числе, частично либо за пределами сроков, указанных в инвестиционной рекомендации (и/или в соглашении об инвестиционном консультировании), а также в иных случаях, установленных законом. | **5.4.** Ներդրումային խորհրդատուն պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք Հաճախորդը կրել է այն դեպքում, երբ վերջինս ֆինանսական գործիքներով գործարքներ է իրականացրել տրամադրված ներդրումային առաջարկության հիման վրա՝ շեղվելով ներդրումային առաջարկությունում և (կամ) ներդրումային խորհրդատվության համաձայնությունում նշված պայմաններից, այդ թվում՝ մասնակիորեն կամ ներդրումային առաջարկությունում և (կամ) ներդրումային խորհրդատվության համաձայնությունում սահմանված ժամկետներից դուրս, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: |
| **6. Дополнительные положения.** | **6. Լրացուցիչ դրույթներ** |
| 6.1. Настоящее Соглашение вступает в силу с даты присоединения Клиента к настоящему Соглашению путем соответствующего указания в Распоряжении | **6.1.** Սույն Համաձայնությունը ուժի մեջ է մտնում Հաճախորդի կողմից սույն Համաձայնությանը միանալու օրվանից՝ «Սպասարկման |

| | |
|---|---|
| на обслуживание (Приложение 1 к Соглашению) и действует без ограничения срока. | հանձնարարություն» փաստաթղթում (Համաձայնության թիվ 1 Հավելված) համապատասխան նշում կատարելու միջոցով, և գործում է առանց ժամկետի սահմանափակման: |
| 6.2. Любая из Сторон вправе в любой момент отказаться от исполнения настоящего Соглашения в порядке, предусмотренном Правилами. | **6.2.** Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել սույն Համաձայնության կատարումից՝ Կանոններով սահմանված կարգով: |